ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.04.2019
341-99

ՀՀ Ազգային ժողովի նախագահ
պարոն Արարարտ Միրզոյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Միրզոյան,

2019 թ.-ի մարտի 29-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր ՀՀ ԱԺ լրատվության և հանրային կապերի վարչություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություն այն մասին, թե ՀՀ պետական բյուջեից որքան գումար է հատկացվել Գերմանիայի Դաշնային Հանրապետություն մեկնած պատվիրակության անդամներից յուրաքանչյուրի ճանապարհածախսի, գիշերակացի և օրապահիկի համար:

2019 թ.-ի ապրիլի 10-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստացել է ԱԺ լրատվության և հանրային կապերի վարչության պաշտոնական գրությունը, որտեղ նշվում է, որ «հարցի պատասխանը կարգավորվում է ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ»:

Նշում ենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը չի վիճարկում արված ծախսերի օրինականությունը: Ուստի համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում է տրամադրել ոչ թե այդ ծախսերը կարգավորող օրինական հիմքերը, այլ հստակ տեղեկություն այն մասին, թե ՀՀ պետական բյուջեից որքան գումար է հատկացվել Գերմանիայի Դաշնային Հանրապետություն մեկնած պատվիրակության անդամներից յուրաքանչյուրի ճանապարհածախսի, գիշերակացի և օրապահիկի համար:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան